«Մոտակա ամիսներին հացի գները չեն բարձրանա: Հետագայում, եթե որեւէ արտակարգ բան տեղի չունենա, ապա բնակչությունն այդ մասին տեղեկություններ կստանա մեզնից: Սա հացի խնդիր է, «լինե՞լ, թե՞ չլինելու» խնդիր է», երկուշաբթի օրը մամուլի ասուլիսում ասաց նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն:

Ղեկավարին լրատվամիջոցները: Այդ օրերին հանրապետության նախագահը «Սուրբ երրորդության» հետ (հիշենք նրանց նախընտրական կերակուրը՝ «Ստավինենք մեր մսերին եւ բազկին», «Քո օրենքը՝ քո երկրում», «Փոխենք մեր կյանքը») տոորսֆելների բաժանման սակարկություն էր անում:

Եթե Հայաստանում ներքին շուկան ապահովում է հացի մոտ 40 տոկոսը, ապա Վրաստանը այս առումով առավել խոցելի է. նախկին մի քանի տարիներին Վրաստանն ապահովել է ստացված հացի մոտ 20 տոկոսը:

...րը չեն բարձրացել: Մեկ կգ ալյուրը վաճառվում է 130-170 դրամով՝ կապված որակից: Պահպանվել են հացի գները: «Վրաստանում հացահատիկի, ալյուրի ներկրման մենաշնորհ չկա», ասաց Չխենկելին:

Ի տարբերություն Վրաստանի, Հայաստանում «հացի բիզնեսը» տնօրինում են մի քանի մականունավոր անհատներ, ովքեր ԱԺ պատգամավոր ընտրվելով հնարավորու...

# Վրաստանում հացի գները կարգավորում է պետությունը

## Հայաստանում այդ հարցով զբաղվում են մի քանի մականունավոր պատգամավորներ՝ հանրապետության նախագահի թույլտվությամբ

Երբ Հայաստանում խորհրդարանական ընտրությունների հաջորդ օրը թանկացան հացի գները, Թբիլիսիում տարածվեցին խոսակցություններ, թե նույնը տեղի կունենա Վրաստանում, այսինքն՝ նոյեմբերի 3-ին վրացիները կուտեն թանկ հաց:

«Այս տարի մի շարք երկրներում սպասվում է հացահատիկի գործ բերք, դրանք այն պետություններն են, որտեղից ներկրվում են (Վրաստան) ալյուր եւ հացահատիկ: Բայց մենք ունենք այլ աղբյուր: Վերջին 10-12 տարիներին մեզ օգնում են մեր ամերիկացի ընկերները: Հույս ունենք, որ այդ օգնությունը կշարունակվի նաեւ այս տարի», ասաց Շեւարդնաձեն:

Հայաստանում հացի եւ ալյուրի թանկացման մասին առաջինը տեղեկացրին լրատվամիջոցները: Այդ օրերին հանրապետության նախագահը «Սուրբ երրորդության» հետ (հիշենք նրանց նախընտրական կերակուրը՝ «Ստավինենք մեր մսերին եւ բազկին», «Քո օրենքը՝ քո երկրում», «Փոխենք մեր կյանքը») տոորսֆելների բաժանման սակարկություն էր անում:

Եթե Հայաստանում ներքին շուկան ապահովում է հացի մոտ 40 տոկոսը, ապա Վրաստանն այս առումով առավել խոցելի է. նախկին մի քանի տարիներին Վրաստանն ապահովել է ստացված հացի մոտ 20 տոկոսը:

«Մենք հացահատիկը ներկրում ենք Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղազախստանից՝ մեկ կիլոգրամը 20 ցենտով: Ռուսաստանում եւ Ուկրաինայում հացի գներն արդեն բարձրացել են: Մենք եւս ունենք մտահոգություններ, բայց ունենք հացահատիկի կուտակված պաշարներ, ինչը թույլ կտա հացի գները մոտակա ամիսներին պահել անփոփոխ», «Ազգի» հետ զրույցում ասաց Վրաստանի գյուղատնտեսության սննդարդյունաբերության բաժնի փոխղեկավար Միխայիլ Չխենկելին:

Թբիլիսիում հացի, ալյուրի գները չեն բարձրացել: Մեկ կգ ալյուրը վաճառվում է 130-170 դրամով՝ կապված որակից: Պահպանվել են հացի գները: «Վրաստանում հացահատիկի, ալյուրի ներկրման մենաշնորհ չկա», ասաց Չխենկելին:

Ի տարբերություն Վրաստանի, Հայաստանում «հացի բիզնեսը» տնօրինում են մի քանի մականունավոր անհատներ, ովքեր ԱԺ պատգամավոր ընտրվելով հնարավորություն են ստացել առնվազն չորս տարի մեզ բելադրել, թե հասկապես ինչ գներով ենք պարտավոր ալյուր գնել, հաց ուտել:

Այլեւս գաղտնիք չէ, թե ովքեր են այդ «ընտրյալները» եւ ինչ դերակատարություն են նրանք ունեցել իրարահաջորդ վերջին բոլոր ընտրություններում:

Միխայիլ Չխենկելին մեր զրույցում ասաց, որ Վրաստանում հացահատիկի, ալյուրի ներկրման ինչ-որ ձեւով պետությունը վերահսկում է, հետեւաբար՝ հացի գներն այս հանրապետությունում կարգավորում է պետությունը: Խոսքը, մասնավորապես, ամերիկյան օգնության մասին է, ինչի վրա կրկին հույս է դրել Շեւարդնաձեն:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Թբիլիսի

# Թուրքիան փորձում է սփյուռքի հետ երկխոսության պատրանք ստեղծել

Սկիզբը՝ էջ 1

Խոսքը տվյալ դեպքում Թուրքիայի արտգործնախարարության հետախուզության եւ հետազոտությունների բաժանմունքից Քադրի Էջվեթ Թեզջանի մասին է: Թուրքական իշխանությունները Հայաստանի եւ հայ-թուրքական հարաբերությունների ապագայի մասին սփյուռքի տեսակետներին ծանոթանալու համար նրան լիազորում են, իսկ ԱՄՆ-ում թուրքական դեսպանատունը հայկական կազմակերպություններին առաջարկում է հանդիպել նրա հետ:

Թուրք-ամերիկյան տարաձայնությունների ներկա փուլում Յայաստանի հետ իր հարաբերությունների բարելավման, ինչպես նաեւ սփյուռքի հետ այսպես կոչված երկխոսության հաստատման այս երկու նախաձեռնությունները Թուրքիայի համար միանգամայն շահեկան են: Այն առումով, որ նախաձեռնությունների դրական արձագանքի դեպքում, անկախ դրանց պատրանքային բնույթից, դրանք ուժի մեջ էին մնալու, ընդ որում՝ որպես Թուրքիայի բարի կամքի դրսեւորում: Թեեւ նախաձեռնությունների բացասական արձագանքը հանգեցնելու էր դրանց ձախողմանը, սակայն ձախողման պատասխանատվությունն ընկնելու էր Հայաստանի եւ սփյուռքի վրա: Այս պայմաններում, ինչ խոսք, Հայաստանը դառնալու է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար գործադրվող ամերիկյան ճնշումների թիրախը:

Ուրեմն, թուրքական վերոհիշյալ նախաձեռնությունները չափազանց հաշվենկատ էին: Դա ենթադրում էր արձագանքի հաշվենկատությունը, ինչն առաջին հերթին վերաբերում էր հայկական կազմակերպություններին, որովհետեւ Թեզջանը թուրքական պետության ներկայացուցիչն էր, այդ իսկ պատճառով նրա հետ ամեն մի հանդիպում ընկալվելու էր սփյուռքի հետ երկխոսություն հաստատելու Թուրքիայի պատրաստակամության ընդառաջում, ինչը համադրվելու էր Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման Գյուղի պատրաստակամության հետ:

Ավելին, քանի որ հանդիպման նպատակը ինչպես բարելավման դեպքում, երկխոսությունը չէր, այլ երկխոսության պատրանքի ստեղծումը, ուստի Թուրքիայի համար ամենեւին կարեւոր չէր, թե Թեզջանին քանի՞ կազմակերպություն կընդունի, կամ ինչի՞ կհանգեցնեն նրա հանդիպումները: Բայց որ դրանք լուրջ վնաս էին հասցնելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին՝ ակնհայտ էր: Միաժամանակ թուրքերին տալով հավելյալ լծակ, նրանց հետ բանակցություններում կաշկանդելու էր հայկական կողմին:

Որքան էլ դա պայմանավորվի Հայոց ցեղասպանությունը չճանաչելով հանդերձ որպես զսպաշապիկ Թուրքիայի դեմ օգտագործելու պաշտոնական Վաշինգտոնի նկատառումներով, այնուամենայնիվ, Հայ դատի հանձնախումբը Թեզջանի հետ հանդիպման առաջարկը միանգամայն իրավացիորեն կտրականապես մերժեց: Միաժամանակ նա հայկական կազմակերպություններին կոչ արեց չընկնել թուրքերի նոր ծուղակը:

Հակառակ դրան, Թեզջանի հետ հանդիպման պատրաստակամություն հայտնեց Ամերիկայի հայկական համագումարը: Թերեւս դա կարելի էր պայմանավորել ԱՄՆ Պետքարտուղարությանը ծառայություն մատուցելու պարտավորությամբ, եթե համագումարը չմոռանար, որ հանդիպման առաջարկը թուրքական կողմն է արել, ուստի նա էլ պետք է հայտնի, թե Թեզջանն ինչ նպատակ է հետապնդում, նրան որ հարցերն են հետաքրքրում եւ ինչպիսին են դրանց նկատմամբ Թուրքիայի մոտեցումները: Համագումարը, սակայն, ոչ միայն մոռացավ, այլեւ առաջ անցնելով թուրքերից, ինքն առաջարկեց հանդիպման օրակարգում ընդգրկել Հայոց ցեղասպանության ճանաչման, Հայաստանի եւ Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների հաստատման, սահմանների վերաբացման, Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման եւ թուրքահայ համայնքի իրավունքների հարցը, ընդ որում նախազգուշացնելով. «Այլապես մենք մերժում ենք հանդիպումը»:

Ինչո՞ւ, որպեսզի պատրանք ստեղծվի, թե հանդիպման համար թուրքական կողմին նախապայմաններ է առաջադրվում: Մինչդեռ թուրքական պետությունը Թեզջանին հենց այդ հարցերի շուրջ ԱՄՆ հայկական կազմակերպություններում տիրող կարծիքները ճշտելու եւ քննարկումներին սփյուռքի հետ Թուրքիայի երկխոսության բնույթ հաղորդելու առաջադրանքով էր լիազորել: Հասկանալի է, որ Թեզջանը հայտարարելով հանդերձ, թե «երկխոսության հիմքում չպետք է դրվեն ինչ-ինչ նախապայմաններ, սիրահոժար հանդիպում է համագումարի ներկայացուցիչների հետ»:

Այլ կերպ, Թեզջանը գիտեր, որ օրակարգում քննարկման դրվող խնդիրները չեն կարող նախապայման լինել, եւ դրանք որպես այդպիսին ներկայացնելու համագումարի փորձերով ականատես եղավ ճղճիմ մտածողությանը: Այդ առումով ավելի քան ճղճիմ էր Թեզջանի հետ ՄԱԿ-ում Թուրքիայի ներկայացուցչությունում հանդիպելու առաջարկի ընդունումը: Ակնհայտ է, որ երբ հանդիպման վայրը ընտրում է առաջարկող կողմը, ապա հանդիպումը վերածվում է ընդունելության: Այդ ընթացքում հանդիպման առաջարկն ինքնաբերաբար դառնում է հրավեր:

Ուրեմն Ամերիկայի հայկական համագումարը, հանդիպելով Թեզջանի հետ թուրքական ներկայացուցչությունում, ընդառաջել է հրավերին, թերեւս դրանով էլ նպաստել սփյուռքի հետ երկխոսություն հաստատելու ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան նախաձեռնությանը: Ցավոք, դրան ընդառաջեց նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության Արեւելյան շրջանի վարչությունը: Ինչ վերաբերում է Թեզջանի հետ վերջիններիս հանդիպումների հնարավոր հետեւանքներին, ապա դա առանձին խնդիր է եւ մասնավոր մոտեցում է պահանջում:



# Ճնշումներ Թեհրանի վարչակազմի վրա

Վերջին օրերին ԱՄՆ-ը, Եվրամիությունը եւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ԱԷՄԳ) Թեհրանի վրա ճնշումներ են գործադրում, որպեսզի նա ստորագրի միջուկային զենքը չտարածելու պայմանագրին կից արձանագրությունը, ինչը թույլ կտար անակնկալ տեսչական ստուգումներ անցկացնել Իրանում: Վիեննայում հունիսի 16-ին ԱԷՄԳ գլխավոր տնօրեն Մոհամմեդ էլ Բարադեյը հայտարարեց, թե գործակալության հինգամսյա ստուգումները ցույց են տալիս, որ Իրանը «թաքցրել է իր միջուկային գործունեության որոշ կողմեր»:

ԱՄՆ-ն իր հերթին Իրանին ամբաստանում է միջուկային զենք ձեռք բերելու եւ Մերձավոր Արեւելքն ապակայունացնելու ձգտումների մեջ: Այս կապակցությամբ «Ֆիգարոյի» վաշինգտոնյան թղթակիցը գրում է, որ իրաքցիներին զենքի ուժով «ազատագրելուց» հետո Ջորջ Բուշի վարչակազմը սկսել է ճնշումներն ուժեղացնել ԱՄՆ-ի երբեմնի ախոյան Իրանի վրա:

Բուշը բացահայտորեն տենչում է Թեհրանի վարչակարգի տապալումը՝ ուրվագծելով «ազատագրված Իրանի» հեռանկարը: Ըստ «Ֆիգարոյի», ամերիկացիներն ուզում են Իրաքի օրինակով իրենց ենթակա դարձնել Իրանը, Սիրիան, Սաուդյան Արաբիան:

Նախագահ Բուշը Թեհրանում մի քանի շարունակվող հակակառավարական ցույցերը «դրական» բնութագրելով հայտարարել է. «Ժողովուրդն սկսում է արտահայտվել Իրանի ազատագրման օգտին»:

Իրանի ներքին գործերին Բուշի այս միջամտությունը զայրացրել է իրանցի ղեկավարներին: Զայրույթն իրոք արդարացի է, մանավանդ եթե նկատի ունենանք, որ ԱՄՆ-ի ռազմավարության այս կտրուկ փոփոխությունը կատարվել է Բուշի առավել ռազմատենչ խորհրդականների ազդեցությամբ:

2001 թ. աշնանը Աֆղանստանում թալիբների վարչակազմի տապալումից հետո ԱՄՆ-Իրան հարաբերությունները փոքր-ինչ բարելավվել էին, երբ Իրանը չափավոր աջակցություն էր ցույց տվել աֆղան նոր ղեկավարներին: Իրանը հանդուրժեց անգլո-ամերիկյան ուժերի ներխուժումն Իրաք, քանի որ տապալվելու էր իր ոխերիմ թշնամի Սադդամ Հուսեյնը: ԱՄՆ-ին անհրաժեշտ էր իրանցիների լուռ համաձայնությունը:

Բայց պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-Իրան հակամարտությունը կրկին սրվեց: Իրանը վերստին «չարիքի առանցքի» երկրների ցանկում է, իսկ ուսանողական ցույցերն օգտագործվում են Իրանի ներքին գործերին միջամտելու նպատակով:

Ավելին՝ Իրաքի ամերիկացի կառավարիչ Փոլ Բրեմերը հայտարարում է, թե իրանամետ ապստամբները փորձում են Իրաքում ստեղծել իսլամական հանրապետություն: Իսկ ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը պահանջում է Իրանում անցկացնել զենքի տեսչական ստուգումներ, պնդելով, թե Թեհրանն իր ստրատեգիությունների գաղտնի ծրագիր ունի եւ «համեմատաբար կարճ ժամանակամիջոցում» կարող է ատոմային զենք ստեղծել:

# Պենտագոնի մամլո քարտուղարը հրաժարական է տվել

Պենտագոնի մամլո քարտուղար Վիկտորիա Քլարկը պաշտոնաթող է եղել, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը լրագրողներին հայտարարել է, թե Վիկտորիա Քլարկի պաշտոնաթողությունը պայմանավորված է անձնական հանգամանքներով: Պենտագոնի ներկայացուցիչները Ռոյթերի թղթակցին ասել են, թե Քլարկն ուզում է ավելի շատ ժամանակ հատկացնել ընտանիքին:

Մինչդեռ «Վաշինգտոն փոստ» թերթն անցյալ շաբաթ հաղորդել էր, որ Քլարկը թերեւս մի քանի ամիս հանգստանալուց հետո միանա հասարակայնության հետ կապերի մասնագետների խմբին, որոնք կազմակերպելու են նախագահ Ջորջ Բուշի վերընտրության արշավը: 1992 թվականին Վիկտորիա Քլարկն արդեն աշխատել է ԱՄՆ նախկին նախա-



գահ Ջորջ Բուշ ավագի վերընտրությամբ զբաղված թիմում:

Պենտագոնի մամլո քարտուղարի պարտականությունները ժամանակավորապես կատարելու է Ռամսֆելդի օգնական Լոուրենս դի Ռիտան:

# Աշխարհում ԱՄՆ-ին եւ Բուշին այնքան էլ չեն սիրում

Բրիտանական BBC կորպորացիայի պատվերով վերջին երկու ամիսներին աշխարհի 11 երկրներում հատուկ հարցումներ են անցկացվել «Ի՞նչ է մտածում աշխարհն Ամերիկայի մասին» ծրագրի համար: ICM ընկերության սոցիոլոգները փորձել են պարզել Ավստրալիայի, Կանադայի, Բրազիլիայի, Ֆրանսիայի, Ինդոնեզիայի, Իսրայելի, Հորդանանի, Հարավային Կորեայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի բնակիչների տեսակետները նախագահ Ջորջ Բուշի եւ ԱՄՆ-ի պաշտոնական քաղաքականության վերաբերյալ:

Պարզվել է, որ հարցման մասնակիցների 57 տոկոսը բացասաբար է վերաբերվում Ջորջ Բուշին: Եթե անտեսենք ամերիկացիներին, ապա Բուշին չարիքի մարմնացում համարողների բաժինը կհասնի 60 տոկոսի:

Հարցման ենթարկված անձանց կեսից ավելին դատապարտում է Իրաքի պատերազմը: Ռուսաստանում պատերազմի հակառակորդները 83 տոկոս են, Ֆրանսիայում՝ 63 տոկոս: Մինչդեռ ամերիկացիների 74 եւ իսրայելցիների 79 տոկոսն արդարացնում է պատերազմը:

ԱՄՆ-ի վարկը հատկապես ցածր է իսլամական երկրներում: Հորդանանցիների 71 եւ ինդոնեզացիների 66 տոկոսը գտնում է, որ ԱՄՆ-ն ավելի շատ է սպառնում աշխարհի կայունությանը, քան այսպես կոչված «ելուզակ երկրներ» ԿԺԴՀ-ն, Իրանը եւ Սիրիան: Հարցման մասնակից 11 երկրների մեջ Ամերիկայից չեն վախենում միայն իսրայելցիները եւ ավստրալացիները: Նույնիսկ ԱՄՆ-ի մերձավորագույն դաշնակից բրիտանացիներն ավելի շատ վախենում են Վաշինգտոնից, քան Դամասկոսից:

11 երկրներից 8-ի բնակիչները բացասաբար են վերաբերվում նաեւ ԱՄՆ-ի հակաահաբեկչական պատերազմին եւ մերձավորարեւելյան քաղաքականությանը: Վաշինգտոնի արտաքին քաղաքականությանը հավանություն են տալիս միայն ավստրալացիները, իսրայելցիները եւ բրիտանացիները: Այսօր ԱՄՆ-ին դրական է վերաբերվում հարցման մասնակիցների ընդհանուր թվի 40 տոկոսը:

Պ. Ք.

